



ՀՈՂԻ ԲԵՐՐԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ՝ ԱՌԱՋԱՐԿԵԼ
ԲՈՅՍԵՐԻ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՏԵՂԱՆՔԻՆ

Lilit Movsisyan



Հայաստանի հողային ծածկույթը

Հողային տիպերը	Տարածումը	Հումուսային շերտի հաստությունը	Հումուսի պարունակու թյունը
Լեռնամարգագետնային հողեր	Հրաբխային լեռնազանգվածների և ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մինչև 3300մ բարձրություններում	20-30սմ	7-8%
Կիսաանապատային գորշ հողեր	Արարատյան գոգավորու թյուն, Եղվարդի և Կարմրաշենի սարվանդակներ, Երանոսի և Ուրծի լեռներ, Խորվիրապ	30-40սմ	1-1,5%
Լեռնաշագանակագույն հողեր	Արարատյան գոգավորությունում, Հարավ-Արևելքում	45-60սմ	3-4%
Լեռնային սևահողեր	Շիրակի և Լոռվա դաշտերում, Սևանի ավազանում, Վայոց ձորի և Սյունիքի լեռնալանջերում	55-75սմ	9-12%
Լեռնաանտառային դարչնագույն հողեր	Անտառային գոտու ցածրադիր տեղամասերում	55-65սմ	6-8%
Լեռնանտառային գորշ հողեր	Անտառային գոտու միջին և բարձրադիր տեղամասերում, հյուսիսարևելյան անտառներում	50-55սմ	4-5%
Մարգագետնային հողեր	Լեռնային սևահողերից և լեռնանտառային գորշ հողերից վեր՝ 2100-2700մ բարձրություններում	40-45սմ	8-11%

Բույսերի Էկոլոգիական Ֆիզիոլոգիա

Բուսական օրգանիզմի ակտիվ ընտրողական վերաբերմունքն արտաքին միջավայրի անբարենպաստ ստրեսային պայմանների նկատմամբ արտահայտվում է նրանում ընթացող գործընթացները ինքնակարգավորելու, չափավորելու, արտաքին միջավայրի գործոնների նկատմամբ դրանց հարմարվողականությամբ, որոնց հետ օրգանիզմն ամբողջ օնտոգենեզի ընթացքում գտնվում է անընդհատ փոխազդեցության մեջ: Սրան են վերաբերվում բույսերի տոլերանտությունը ջրի անբավարարության կամ ավելցուկի, ցածր կամ բարձր ջերմաստիճանի, հողային լուծույթում աղերի անբարենպաստ կոնցենտրացիաների, ինչպես նաև տարբեր հիվանդածին միկրոօրգանիզմների ու վնասատուների նկատմամբ:

Բույսերի ոչ միայն արտաքին տեսքն է կապված արտաքին միջավայրի հետ, այլ նաև նրանցում ընթացող կենսական պրոցեսները: Բույսերի ֆենոլոգիական զարգացման վրա ազդում են ֆիզիկաաշխարհագրական տարբեր պայմանները: Կան այնպիսի բույսեր որոնք կարող են ծաղկել նույնիսկ վեգետացիայի ավարտման պահին:

Տարբեր բարձրադիր գոտիներում աճող բույսերի մորֆոգենետիկ և աճման էներգիայի տարբերությունները պայմանավորված են նրանց նյութափոխանակության տարբեր ինտենսիվությամբ: Բնության մեջ գոյություն ունեն բույսերի բազմաթիվ կենսաձևեր, որոնք հարմարվել են բնության բնական պայմաններին:

Հողի բերրիությունը

Հիմնական հողի հատկությունը դա բերրիությունն է: Դա նշանակում է, որ հողի հատկությունն է՝ բավարարել բույսերի պահանջը սննդատարրերով, ջրով, օդի և ջերմության պահանջվող քանակությամբ ապահովել դրանց արմատային համակարգը նորմալ գործունեության համար: Մշակաբույսերի բերքատվությունը հողի բերրիության գլխավոր ցուցանիշն է:

Ինչպես ասում էր Վիլյամսը՝

«Երբ մենք խոսում ենք հողի մասին, ապա պատկերացնում ենք երկրագնդի ցամաքի արտաքին փխրուն հորիզոնը, որն ունակ է արտադրել բույսերի բերքը»:

Հողի բերրիությունը՝ դա հողի որակական ցուցանիշն է, որով տարբերվում է լեռնային ապարներից:

Գոյություն ունի 2 կարգի բերրիություն.

✚ Արհեստական

✚ Բնական:



Արհեստական բերրիությունն անվանում են նաև արդյունավետ բերրիություն: Այն ստեղծվում է մարդու աշխատանքով, հողօգագործության ընթացքում ոռոգման, պարատացման, չորացման, ագրոտեխնիկական և այլ միջոցառումների կիրառման ճանապարհով: Այն անվանում ենք արհեստական, քանի որ մարդը հող է ներմուծում սննդատարրեր՝ օրգանական և հանքային պարարտանյութերի ձևով:

Բնական բերրիությունը բնորոշվում է բույսերին անհրաժեշտ սննդատարրերի ընդհանուր պաշարով: Այն առաջանում և զարգանում է բնական գործոնների ազդեցության տակ, առանց մարդկանց միջամտության:

Բնական բերրիությունը կարող է լինել պոտենցիալ, դա նշանակում է, որ հողում առկա են սննդատարրեր, սակայն բույսերը չեն կարողանում դրանցից օգտվել՝ անլուծելի վիճակում գտնվելու պատճառով:

Գոյություն ունեն հողի բերրիության տարրեր և պայմաններ:

Բերրիության տարրերն են.

- ✚ ջուրը,
- ✚ սննդատարրերը,
- ✚ թթվածինը:

Բերրիության պայմաններն են՝ ջերմությունը, լույսը (տիեզերական կամ էներգետիկ), հողային լուծույթի ռեակցիան, հողի հզորությունը, կառուցվածքը և հողի ծակոտկենությունը:



Բերրության մակարդակը պայմանավորված է հողի սննդային, ջրային, ջերմային, օդային, կենսաքիմիական և այլ ռեժիմներով:

Սեզոնային բնույթ է կրում գյուղատնտեսական արտադրությունը: Ուսումնասիրելով հողի հանսկությունները, հողագոյացման գործընթացի և բնական բերրիության զարգացման օրինաչափությունները, մարդը կիրառելով համապատասխան միջոցառումների համակարգ, գիտակցաբար կարգավորում է հողի և բերրիության զարգացման գործընթացը ցանկալի ուղղությամբ:

Հայաստանի հողերը

Հայաստանն ունի բարդ ռելիեֆ: Բարդ ռելիեֆի ազդեցության և բազմազան կլիմայական պայմանների պատճառով մեր երկրում ձևավորվել են բնական լանդշաֆտներ և դրանց բաղադրիչների բացառիկ բազմազանություն: Հայաստանի չորս տասնյակ հազար կմ² տարածքի ամենացածր կետը ծովի մակարդակից 110մ բարձրությունն է և ամենաբարձր՝ ծովի մակարդակից 4090մ բարձրությունն է: Դրա շնորհիվ է, որ ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր տարածության վրա բնությունն անճանաչելի փոխվում է: Փոխվում են նաև կլիմայական պայմանները, հողային ծածկույթը, բուսական և կենդանական աշխարհը:



Հողային ծածկույթի խոշոր մասշտաբի ուսումնասիրումն ու քարտեզագրումը թույլ են տվել Հայաստանի Հանրապետության տարածքում առանձնացնել հողերի 14 գենետիկական հողային տիպեր, 27 ենթատիպեր և բազմաթիվ սեռեր, տեսակներ ու տարատեսակներ:



14 հողատիպերից 8-ն ունեն գոտիական բնույթ և զբաղեցնում են հանրապետության ընդհանուր տարածքի 83.7%-ը:

Դրանք ներկայացված են՝

- ✚ Լեռնամարգագետնային՝ 16.6%
- ✚ Մարգագետնատափաստանային՝ 9.5%
- ✚ Անտառային գորշ՝ 4.5%

Անտառային դարչնագույն՝ 18.9%

- ✚ Սևահողեր՝ 24.1%
- ✚ Շագանակագույն՝ 8.2%
- ✚ Կիսաանապատային գորշ՝ 5.1%
- ✚ Ոռոգելի մարգագետնային գորշ՝ 1.8%

Ազոնալ հողերի տարածությունը կազմում է ընդամենը 4.2%:

Դրանք են՝

- ✚ Անտառային ճմակաբբոնային՝ 0.5%
- ✚ Մարգագետնասևահողային՝ 0.4%
- ✚ Գետահովտադարավանդային՝ 1.6%
- ✚ Հիդրոմորֆ աղուտ-ալկալի՝ 1.0%

Հանրապետության տարածքի մնացած մասը՝ 12.1% գտնվում է արմատական ապարների ելքերի, ավազների ջրերի, ճանապարհների և շինանյութերի տակ:

ԲՈՒՅՄԵՐ

Լոբի

Հայաստանում մշակվում են լոբու տեղական պոպուլիացիաները, որոնք ավելի են հարմարված տեղի հողակլիմայական պայմաններին և մշակվում են մինչև 2000մ բարձրության վրա: Լոբին լուսաջերմասեր բույս է, ծլման համար նրան անհրաժեշտ է խոնավություն: Լոբին



պահանջում է օդաթափանց, թեթև, օրգանական նյութերով հարուստ հողեր: Այն վատ է աճում կավային, ծանր և ճահճային հողերում: Կանաչ լոբի աճեցնելու համար շատ մեծ նշանակություն ունի օդի հարաբերական խոնավությունը: Լոբու ունդերը շատ չոր և շատ տաք պայմաններում կոպտանում է և դառնում անորակ:

Դդում

Դդումը ցրտադիմացկուն, բայց ջերմասեր մշակաբույս է: Սերմերը ծլում են 13-14°C պայմաններում, բայց լավագույն ջերմաստիճանը ծլման համար հանդիսանում է 24-27°C-ը: Այն պահանջկոտ է օդի և հողի խոնավության նկատմամբ: Լավ աճում է պարարտանյութով հարուստ, թեթև կավաավազային, բերրի, օդաթափանց, խամ ու խոպան հողերում:



Ծաղկակաղամբ

Ծաղկակաղամբը բարձր պահանջ ունի հողի նկատմամբ: Նրա համար լավագույն ջերմաստիճանն է հանդիսանում՝ 15-18°C-ը: Ծաղկակաղամբը մշակվում է կլիմայական բոլոր գոտիներում: Տարածված է Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում:



Գազար

Գազարը ցրտադիմացկուն բույս է: Նվազագույն ջերմաստիճանը սերմերի ծլման -3-5°C է, լավագույնը՝ 18-25°C: Գազարը լավ է աճում բերրի, ավազակավային, կավաավազային, փուխր, խոր վարելաչերտ ունեցող հողերում, ինչպես նաև ՀՀ լեռնային սևահողերում: Գազարը պահանջկոտ է խոնավության նկատմամբ: Կտրուկ անցումը չորայինից բարձր խոնավության բերում է արմատապտղի ճաքման:



Զմերուկ

Զմերուկը լավ է աճում ավազակավային և կավաավազային օրգանական նյութերով հարուստ հողերում, ինչպես նաև սևահողերում: Զմերուկի համար լավագույնը խամ ու խոպան հողերն են: Զմերուկը հիմնականում լավ է մշակվում Արարատյան դաշտավայրում: Գրունտային ջրերի բարձր մակարդակ ունեցող հողերում ձմերուկը մշակում են հարթ մարզերով, ոռոգելով 1-2 անգամ, իսկ մնացած հողերում՝ ջրելով 4-5 անգամ:



Ծնեբեկ

Բույսը ջերմաստիճանի նկատմամբ պահանջկոտ չէ, լավ է աճում ինչպես սառը, այնպես էլ տաք պայմաններում: Ծնեբեկի վրա վատ են ազդում միջանցիկ քամիները: Ամռանը ծնեբեկի բույսերն առաջացնում են վերգետնյա կանաչ զանգված և կոճղարմատային փարթամ համակարգ: Ակտիվ աճը սկսվում է ապրիլի կեսերից: Մեկ բույսի բերքատվությունը հասնում է 250 գրամի: Բույսն ապրում է արդյունավետ 8-10 տարի, որից հետո անկում է:



Ծիրանենի

Ծիրանենին լավ է աճում և պտղաբերում թեթև կավաավազային, ջրաթափանց, ավազակավային, քարքարոտ հողերում: Շատ վատ է աճում ծանր կավային և գերխոնավ հողերում, որոնց ենթահողը ունի բարձր ջրակուտակման ունակություն ունի:



Դեղձենի

Դեղձենին լավ է աճում տաք կավաավազային, ջրաթափանց, հաստ շերտ ունեցող ավազակավային, հետանտառային, շագանակագույն և գորշ կարբոնատային հողերում: Դեղձենին վատ է զարգանում սառը կավային, ճահճացած, չոր ավազակավային անթափանց ենթահող ունեցող հողերում:



Խնձորենի

Խնձորենու նորմալ պտղաբերության և աճի համար անհրաժեշտ է կավաավազային, հետանտառային, շագանակագույն, հզոր սևահողերը, որոնք ունեն ջրունակ ենթահող և որոնք լավ ջրաթափանց են: Խնձորենին վատ է աճում ուժեղ կարբոնատայինու քարքարոտ, թեթև չորաավազային, սակավագոր, ծանրավազային, շատ խոնավ և սառը հողերում:



Ընկուզենի

Լավ է աճում խոնավությունը լավ պահպանողկավաավազային, ավազակավային հողերում, ձորերում, ձորակներում: Վատ է աճում և թույլ պտղաբերում աղակալած, ծանր և սառը կավային ու ճահճացած հողերում:



Նոնենի

Նոնենին չունի ողղաձիգ գնացող խորը արմատներ, սակայն բավականաչափ չորադիմացկուն է և լավ է զարգանում տարբեր տիպի հողերում: Հատկապես լավ է զարգանում փուխր, ջրաթափանց ավազակավային հողերում: Անգամ դիմանում է հողի թույլ աղակալվածությանը: Չի հանդուրժում ծանր, չտաքացվող հողերը:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Մույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):